



ԼԵՆ ԿԱՄՏԱՐ

Նամակ «Հորիզոնին»

Հարգելի խմբագրություն.

Ասկե իբր ամիս ու կես առաջ դրկեցի ձեզ մի ֆելիետոն»Գաղթականը» վերտառությամբ: Սպասեցի որևէ լուրի, չստացա այդ լուրը, և «Գաղթականից» մի ամիս հետո բաց թողի մի երկրորդ ֆելիետոն՝ «Անվավեր մեռելներ» անունով: Գնաց «Անվավեր մեռելները» ու ալ ետ չդարձավ: Նոր այն ատեն հասկցա, որ իմ դրկածները, երկուքն ալ նոյի ագռավներ են եղած, բայց և այնպես երրորդ անգամ հարկ չհամարեցի աղավնի մըն ալ դրկել ագռավներուն ետևեն ինչ-ինչ պատճառներով: Բայց թողունք այդ:

Անցյալներ փոստարկղի բաժնին մեջ կարդացի պատասխան մը՝ ուղղված ձեր մեկ թղթակցին. «Ձեր հոդվածը մոլորված է գամբյուղին մեջ, շարունակեցեք գրել»... Շատ ուշագրավ պատասխան մը, որմե ինքնաբերաբար կծագի սա հարցը, թե այդ լաբիրինթոս - գամբյուղը աշխարհագրորեն ո՞ր գետեղված է, խմբագրական սեղանին առաջ, թե ետև, կամ առաքված հոդվածները նախ գամբյուղը կմտնեն նորե՞ն քննության սեղանին վրա կբարձրանան, թե՞ քննության սեղանեն գամբյուղը կերթան: Ավետարանական բարբառով ըսած, հոդվածները նախ կխոնարհի՞ն, որպեսզի բարձրանան, թե՞ կբարձրանան, որ խոնարհին: Սա պարագան յուրաքանչյուր աշխատակից գիտնալու է, վասնզի գուցե մեկ թղթակից ալ գտնվի, որ թողած իր իննսուն և ինն հոդվածները անտեր, իր մեկ մոլորյալ հոդվածին ետևեն իյնա...

Կխորհիմ, որ իմ «Գաղթականն» ալ մոլորված պետք է ըլլա նույն գամբյուղին մէջ: Այս մոլորումը հավանական կտեսնենք անով, որ իմ առաջին հոդվածը լինելով, ձեր խմբագրատանը մէջ ճամփաներուն անտեղյակ է եղեր ու ինձ նման ամաչկոտ ըլլալով, խպնած է տեղյակ մեկէ մը հարցնելու այն ճամփան, որ կտանի դեպի խմբագրին սեղանը և ասանկով գոհ է գացեր իր ամաչկոտությանը: Կամ գուցե երկար պտտելով խմբագրատանը մէջ տիրող իրարանցման ու թոհութոհին մէջ, երբ վերջապէս համոզված ըլլալով, թե այդ աղմուկին մէջ իր վրա ուշադրություն դարձնող մը չկա, հուսահատորեն ինքզնիքը գամբյուղը նետած է ու եղերական ձևով վերջ տված իր չարքաշ կյանքին:

Այս բոլորեն հետո արդյոք իրավունք ունի՞մ հարցնելու ձեր պատվարժան խմբագրութենէն, թե՛ աշխատակից մը քանի՞ ամիս սպասելու է իր հոդվածի մասին լուրի մը, որմէ հետո միայն իր հույսը կտրէ: Կամ ներկա դեպքում՝ քանի՞ ամիս պիտի սպասեն, որ խմբագրությանդ կողմէ հայտարարվի, թե՛ ձեր հոդվածը կորել է:

Ժամանակ մը որքան գայրացած էինք ռուս դատավորներուն դէմ, երբ 1-2 տարի մեկը բանտարկելէն հետո, հանկարծ անպարտ կարճակէին դատավարութենէն վերջը: Եվ որքան իրավունք կուտայինք այդ արձակված մարդուն պոռալու դատաստանական պալատն ի վեր՝ Է՛յ, կոսբողին, եթե արդար պիտի ելլէի, ինչո՞ւ երկու տարի բանտարկեցիք ինձի:

Ես ալ մտադիր եմ երկու ամսէն ետքը պոռալ առ ձեր խմբագրությունը.

-Պարո՛ն խմբագիր, եթե հոդվածս կորցնելու միտք ունեիք, ինչո՞ւ անոր ձեր դուռնէն ներս մտնելուն պէս սխալ ճամփա մը չցուցուցիք, որ առաջին օրէն իսկ «մոլորեր» ու հոդվածագրիս երկու ամիս շարունակ սրտամաշուկ չպատճառեր:

Վերջացնելով գրությունս, կպահանջեմ... չվախնաք, կաղաչեմ, զի պահանջս հաց, լոյս, ազատություն լինելու չէ բնավ, այլ շատ դյուրին բավարարվելիք բաներ:

Օրինակ.

Անհապաղ տեղեկություն մը գույգ ֆելիետոններու մասին:

Քիչ մը ավելի ուշադրություն դեպի նորընծա գրողներս, գեթ պատասխանի մը արժանացնելու չափ: Աղեկ գիտնալով, որ առանց այս տարրական պահանջներուն բավարարությանը, թղթակիցը կմեռնի ապաքեն:

1916թ.